



Ժողովրդասին շաբաթաթերթ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԵԱԳԻՐ
ՋԱՐԲԱՅԻ ՔԱՂԱՆՈՅ ՎԷՋԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՃԱԲԱԹ, 19 ՓԵՏՐՎԱՐ 1911

ԹԻԻ 6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամուսնութիւն մարդկային հոգւոյ	ՅՈՎՀ. ԱՐՔԵՊ. ԱՐՇԱՐՈՒՆԻ
Էջ. ՄԲ. ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ, Գաղիկոսի ժողովը .	ՍԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ
Ո. ԳԻՐԲԷՆ ԳՈՒՔԵՐ, Հերովդատոյ զոհը	ՍՈՒՐԷՆ Ծ. Վ. ԳԱԼԷՍԵԱՆ
ՀԱՅ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՍԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹԻՒՆԷՐ, Հայութիւնը և .	
Դարաւ տուրքն է. — Դիւանդեանք եւ Վարդանանք .	ԳԱՋՐԻԿ
ՀԱՅ ԳՐԵՐ Ե՝ ԳՈՐՈՒՆ. — Տիկնայր փափկատունք Հայոց .	
աշխարհին	ԵՂՐԵՂ
ՔԱՃԱՔԱՏՈՎԱՆ, «Կրօնի Գառնը» Տ. Մուշեղ Եղիսի . . .	ՀՄԱՅԵԱԿ ՔԶ. ԷՔՍԷՐՃԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՆՔԷՐ. — Շարժումն ըսրին	

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՆԹ»

Գ. Աճաի Դարաւու, Գ

Գ. Ա. Ա. ԹԻԱ

1853

THE NEW YORK PUBLIC LIBRARY
ASTOR LENOX TILDEN FOUNDATION

1853

THE NEW YORK PUBLIC LIBRARY
ASTOR LENOX TILDEN FOUNDATION



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐԹՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՏԱԲԱԹ, 19 ՓԵՏՐՎԱՐ 1911

ԹԻԻ 6

ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈԳԻՈՅ

Նախադասական դարերու չբնական մէջ, մեր այժմեան ժամանակի հետազոտութեանց լոյս բնծեալ է մեր հետաքրքրութեանը գոհացում տուող ուսումնասիրութիւններ կը պակսին ի մասին հոգեբանութեան. թէև, շատ ետքեր, օտարազգի երկւեղէ հեղինակներ պատուարած են աշխատութիւններ, որոնց մէջ նիւթի ոգիւնը քաղուած վարկածներ միայն կը քաղին մեր տեսութեանց: Անոնց իմաստասիրութեան մէջ, չորսնիւր տնտեսութիւն կը մտնէ մեզ, նախադասական անոնց ու յեղաշրջութեանց բուն երանդը, եւ այն տեսնի մարդոց նկատ ու կայր և վարքն ու բարքը: Հետեւապէս, չենք կրնար դիմադրու գաղափար, անոնց ի մասին անմահութեան անբացած գաղափարն ու կարծիքը: Հեղինակները քաղմատուածութեան ժամանակներէն կը պատահինք իսկ մի իմաստասիրութեան գլխաւորաբար Հեղինակ մէջ, որոնք ըստ բաւականին լոյս տալով ինչ հոգեբանական գիտութեանց վրայ, բայց

մեր պրպտած կէտերուն յազուրդ տալէ հետի են: այս պատճառաւ, նոյն ասանուան ուսումնական նախադասարումներն ու հասարակ ժողովուրդներու համոզումները պրկուած անգոր դանուած են: Արքէ-սիրտ, Արքէլայոս, Անապոսաքոս, Անարքաարքոս, Անաքսիմանար, Անաքսիմէ-նէս, Եպիկուրոս, Բուքարոտէս, Եւ որ աւելին է՝ Սոկրատէս, Պլատոն, Պիթագորաս եւ անոնց հետեւող փիլիսոփաները գտնուած ժամանակներու մէջ վարժացներ, ակադեմիներ հիմնեցին ու միմեանց վարդապետութիւնը կամ հերքեցին եւ կամ խեղափոխեցին: Ասանք թէև իրենց քարոզութիւններով վարուց եւ բարուց մէջ փոքր և շատեւ մաքրագործումներ յառաջ բերին, բայց, իրենց դաստանդութեանց հետեւողներէն շատերը սկեպտիկ դիմադրեցին մի մասնեցին: Չկրցան մաքուր ու ճիշդ գաղափարներով պարարել անոնց միտքերը, ի մասին հոգեւոր անմահութեան: Յետ Բրիտանի երեւան եկող փիլիսոփաները—այց ամանք վարդապետ Եկեղեցւոյ են—, որոնք մարդկային հոգեւոր անմահութեան սահմանը որոշակի ու մեկին կերպով դնեցին, ներշնչեցին բարեպաշտիկ համոզումներ, որոնցմով օժտուած անհատացեալներ եւ վսեմ բարոյա-

կանի բարձր մակարդակին վրայ վերելու
կէտեցին իրենց բեղուն կեանքը: Երկու-
ցուց աւելորդ ծանրոյթ չարածառելու
համար, աւելորդ կը համարեմ ճաշ, յակա-
նէ յանուանէ նշանակել յիշատակոյ տը-
ժանի այն անձնաւորութիւնները, որոնք
ի ծոց քրիստոնէական կրօնի վերամար-
տիկներ հանդիսացան: Անտի եւ այս պա-
կաս չեղան հոգեմարտիկ տոկեառներ,
տատուածընդդէմ իրօտը ու գրեւ շարժող
տատուագէտներ, բնութագրող, բնութագրող
ներ եւ ինչ:

Բայց, անհուն ու անսահման Մեծու-
թեան մ'առջեւ, մերթ յայտ մերթ յայն
դեղերեղէ դինի, ապիկարացան իրենց սահ-
մանաւոր մտքին տկարութիւնը խոստովա-
նելու, ու անտույց կայութեան մը կեն-
թարկուելուն, նման այն դեկալորոյցի՝ Կա-
ւուն՝ որ յայնաստոր Սփիւնուտ ամենի
տղեաց շատ օրեք խաղաղիկ դառնալէ յի-
մայ, վերջանէ՞ն կը բաղի իսկ իրենք եւ կը
խորտակին:

Կրօնաւորութիւն թէ՛ ալ կարգի ուն-
ձանց ունեց հմտութիւնը բազմադմանի,
ու մտաւոր պաշարը բազմազան են, բայց
երկնց յեանկէտը նիւթը միմյնի բլլալով,
վրիպմիլէ ի վրիպակ, մեղրութիւնի ի մե-
ղրութիւն չընկնան:

Եթէ, մարդս միանգամայն տանտի
իւր ունի ու ուրուշը, եւ մէկ Կոյմ թողով
Հին եւ Նոր Կտակարանները, խղճով մի-
այն մտաւեւում ունենայ մարդկային նն-
հանքիւնութեան մէջ դանուած այն իրին
բնութեանը եւ գոյութեանը՝ որ կ'ապրի եւ
կը դադրի ապրելէ, բնական համոզում մը
պիտի հանկուծէ իր մէջ թէ ինչ որ կ'ան-
կենդանանայ թանձր մարմին է՝ տեսանելի
եւ զգայարանայ չօգտուումն ենթարկելի —
իւր շէնքը կապմոջ բոլոր օգտակարակ,
հաստատուեալն կողերու մանրամաս-
նութիւններով: Մարմնային նիւթային
մտային բարդագործութիւններու զարկ ու թիւ-
ռիչ ուռուց ոյն է՝ որ կայ ու կը մնայ,
եւ մենք գտնի հոգի մտնուածները:

Հիշման եւ Բրիտանաց հոգեբաններ
ալ տարբեր անուանել քրիստոնէայի մէջ:
Մարմնը իր բնականութեամբ կը յայտնէ

արդէն թէ տպականացու նիւթ մ'է եւ
ո՛չ տարրեր ինչ: Հոգին բնականութեան
յանկութեան զգած նյութ մը բլլալը կը ցուց-
նէ իւր խորհողական կարողութեան մէջ:
Վասն զի, հին յիշատակներու պատկերը
դնուեալ եւ հնազանդ իրաց քաղաքներու
համեմատութիւնը կը կեդրոնացնէ իւր անշիւթ
եւ անբաժան միութեան մէջ: Մարմինն՝
առ հարկի վերաբերման անդամատու-
թեան կ'ենթարկի երբեմն, մին կամ միւս
մասն կը պարկէ, բայց հոգին ո՛յս պա-
րագային մէջ իսկ իւր կենսականութիւնը
կը պահէ: Եթէ մէկը տաքիլէ թէ մարմ-
նայն գլխուս անդամներէն մին՝ օրինակ
աղաղաւ՝ գլուխը կամ աղիքը, փայծաղը,
երիկամունքը եւ կամ սիրտը հանուելու
պիտի, արդեօք դարձեալ հոգի կուռած
դոյացութիւնը մը պահէ իւր կենդանու-
թիւնը: Աստուծոյ պատկերանման թէ

կենդանաշարժ մեքենայի մը բոլոր մասերը
շարժումի մղւոյն է, երկարամիակ զօրով
թիւնը: Եթէ մեքենան խանգարի եւ գոր-
ծելէ դադարի իսկ ելլէր արդէն՝ դորու-
թիւնը նոյն կը մնայ բնութեամբ: Այսպէս
լմացիր հոգւոյն համար ալ: Անձին քննու-
թիւնի ինքնին մեծ քաղաքային մը՝ Վրնմայ
մեղ, թէ մարդկային հոգին անմահ է,
խորնոյ, մասածոյ, արտադրող ու գործող
է՝ փորձն ալ կը հարստանէ թէ նիւթը
խորհելու կարողութեանէն՝ զուրկ է, հուզե-
ւաբար կայ մարդկային անհատականու-
թեան մէջ աննիւթական կայութիւն մը՝
որ աղատօրէն կը սկսի գործել եւ կը վեր-
ջանայ գործելէ, կը վերսկսի, կը փոփոխէ
եւայն: Եթէ ինչ որ պիտի տայ հանգա-
մանքները, վասն զի անտանտի օրինաց
ենթակայ է:

Մեր մարմնական շարժումները յաւաճ
բերող մասունքներն ինչպէս են՝ ձեռք,
ոտք եւայն, ո՛չ ինքնագիտակցութիւն ունին
եւ ո՛չ ճանաչողութիւն: Դիտող եւ խոր-
հողը, գործողը՝ մարմնէն անկտա գործող
թիւն մ'է:

Ոգեհարցութեամբ պարագայները կեր-
պիւ իւրք կը հաստատեն զայս:

Երբ, ուշադիր կերպով զննենք մեր
մարմնային մասունքը, իրարու ներհակ երկու

ուածը քաղուած է՝ Տ. Մաղաքիս Ս. Արքեպ.
Օրմանեանի Ֆրանսերէն դարձէն. l'Eglise Ar-
menienne, որուն երկու կարեւոր գլուխները՝
Հայ Եկեղեցւոյ Առաքելականութեան վրայ,
ներկայացուցած էինք ասկէ առաջ։

ՔԱՂԱՅԻՒՆԻ ԺԱՂՈՎՐ

Բիւզանդիոնի Արհիմանտրիս Եւփրէսի
ցուցուցած եռանդը՝ Նեստորի սխալներուն
դէմ պայքարելու համար, իր հեղինակին
անկեղծութենէն քաղուածին տարբեր տը-
գիւնք ունեցաւ։ Իր միջամտութիւնն
առիթ ընծայեց անվերջանալի անճամաճայ-
նութեանց Բրիտանիոյ բնութեանց միտ-
թեան և կամ կրկին բնութեան վրայ, և վէճեր
յառաջ բերաւ Կ. Պոլսոյ, Աղեքսանդրիոյ և
Հռոմի աթոռներուն միջև։ Անտիոքի զրդ-
րոցը, որուն կը հետեւէր այս մասին Կ.
Պոլսոյ Աթոռն ալ, այնպիսի վարդապետու-
թիւն մը կը քարոզէր, ուր տեսակ մը բա-
ժանում կը դրուէր Յիսուս-Քրիստոսի տա-
ռածութեան և մարդկութեան միջև, մինչ
Աղեքսանդրիոյ դպրոցը կը պնդէր երկու
բնութեանց սեղմ միութեան վրայ, վախ-
նալով որ մի գուցէ դուռն ըլլայ Փրկա-
դրժութեան Խորհուրդին։ Եփեսոսի երրորդ
Տիեզերական Ժողովին մէջ (431) յաղթա-
նակած էր Աղեքսանդրիոյ վարդապետու-
թիւնը, և Քրիստոնէութեան նշանորդան
եղած էր Կիւրիզ Աղեքսանդրացիի բանա-
ձեւը, որ միացեալ բնութիւն մը կը ճանչ-
նար մարմնացեալ Բանին մէջ։ Նեստոր,
պաշտօնաւ Անտիոքի դպրոցին, և Կ. Պոլ-
սոյ Պատրիարք հռչակուած, որ պարզ բա-
րցական միութիւն մը կը վարդապետէր
երկու բնութեանց միջև, նոյն Ժողովին
վճիռովը դատապարտուած էր։ Արհիման-
տրիս Եւփրէս, եօթնամասնական ծերունի
մը, այնպիսի վարդապետութիւն մը կ'ըն-
դունէր (441), որ միութիւնն յառաջ կը
տանէր երկու բնութիւններն իրար խառնե-
լու և չփոխելու տարածան, որուն հետե-
ւանքը կ'ըլլար զրկել անհատացումը Քրի-
ստոսի մարդկային բնութեան և անոր մարմ-
նոյն տառապանքին ծաղումին։

Այս կարճքին վրայ էր որ Փլաքիմոս
Պատրիարքը դատապարտեց Եւփրէսն և
իր վարդապետութիւնը, Կ. Պոլսոյ մէջ դու-

մարուած (448) մասնաւոր Ժողովի մը մէջ։
Դիոսկորոս Աղեքսանդրացի կարծեց թէ
այս որոշումով կը մերժուի իր նախորդին և
իր դպրոցին վարդապետութիւնը, և վե-
րադարձ մը կ'ըլլայ դէպ ի նեստորականու-
թիւն։ Հետեւապէս նոր Ժողով մը հումա-
րենց Եփեսոսի մէջ (449) և յաջողեցաւ դա-
տապարտել առ Փլաքիմոսն և Նեստրա-
կանները։ Հռոմի եպիսկոպոս Լէոն Ա. ալ,
իր կարգին, ի պաշտպանութիւն Փլաքի-
մոսի, Հռոմի մէջ մասնաւոր Ժողով մը կը
դուռնարէր (450) Եւփրէսի և Դիոսկորոսի
դէմ։ Եւ իր պնդումն աւելի կ'ելաւ ընծա-
յելու համար, Մարկիանոս կայսրը կը հա-
մուէր Տիեզերական Ժողով մը դուռնորդու
Քաղկեդոնի մէջ, ուր շնորհիւ բանադա-
տական միջոցներու իրեն վերջնական կը
ճանչցնէր իր վարդապետութիւնը և իր
նամակն առ Փլաքիմոս, որ կոչուած է
Իովսոս sk Լեոն (451)։

Երկու կուսակցութեանց մղկղնութիւնը
լու ևս կը բացատրուի, երբ մտածուի թէ
ոչ միայն տառածարանական խնդիր մը
կար մէջտեղը, ինչպէս էր Յիսուս-Քրի-
ստոսի բնութեանց վերացական հարցը, այլև
զերպանցօրէն թանձրացեալ շո՛ւ մը կար
պաշտպանուելիք, այն է Պատրիարքու-
թեանց աղեկցութիւնը։ Երկրոյ Ժողովին
ժամանակ Յունա-Հռոմէական ուշիւարժ
լուծումը էր Հռոմի, Աղեքսանդրիոյ և
Անտիոքի երեք աթոռներուն միջև, և իւ-
րաքանչիւրը կը դարձէր իր իրաւասու-
թեան անճամաճին մէջ։ Խռանց նախնայա-
նութեան յառաջնութեան։ Բայց այս կա-
ցութիւնը փոխուած էր Ե. դարու միջոցը.
Կ. Պոլիս պատրիարքութեան բախճաբացած
էր, այդ քաղաքին մէջ դուռնարուած (381)
Ժողովին կողմէ, և Հինն Հռոմի հետզհետէ
չեղաւուղ նուազումէ և նոր Հռոմի աղ-
ղեցութեան ու եղնողը կարծել տուած էին
Կ. Պոլսոյ պատրիարքներուն թէ իրենք
միւսներէն զերազանց են։ Արդ, Աղեքսան-
դրիոյ Պատրիարքութիւնը չէր կրնար հան-
դուրիւր այս փառապրական դիտմաներուն։
Քարապէս համոզուած նախորդ Ժողովներու
մէջ իր կանոնարած դերին կարեւորութեան,
և մանաւանդ իր աթոռակալներուն—Աղեք-

տանդը, Աթանաս, Թէոփիլոս, Կիւրեղ և Դիոսկորոս—փոյցուն ուրժանիքին, կը կարծէր թէ կրնայ իրեն վերապահել Քրիստոնէական վարդապետութիւնը, և իբրեւ իրաւարար ներկայանալ վարդապետական ճշմարտութեան: Կը պնդէր թէ Նիկիոյ մէջ Աթանասի, և Եփեսոսի մէջ Կիւրեղի յաջողութիւնները չէին կրնար նուազիլ Փրաքսանտի և Էփեսոսյան թիւններով, որոնց ձեռնարկները զրեթէ թշնամանք մ'էին Աղեքսանդրիոյ Աթոսին: Այն ատեն Կ. Պոլիս և Հռոմ միացան, պայքարելու հաճոյք հաստատեց թշնամիին դէմ: Եւ անհետեւ որ Մարկիանոսի աշխարհական բազուկը նուիրագործեց Քաղկեդոնի կտրճեցեալ յաջողութիւնն Աղեքսանդրիոյ Աթոսին դէմ:

Բայց, ճիշտն ըսելով, այդ յաջողութիւնը ո՛չ իրական էր և ո՛չ հաղթանակ: Քաղկեդոնի Ժողովը, ի մէջ այլոց, ճանչցած էր Կ. Պոլսոյ Աթոսին նախապատուութիւնը: Բայց Հռոմ կը մերժէր ճանչնալ, վախճալով որ իր կարգին ճարտիկ յարձակում մը կը կրէ: Հռոմ տարբերութիւն մը կը դնէր միեւնոյն ժողովին ընդունելի և անընդունելի կանոններուն միջև: Յուն-Հռոմէական աշխարհի եպիսկոպոսութիւնը երկու կուսակցութեանց բաժնուած էր, և հաւատացեալներն ապիպայից ցոյցեր կ'ընէին Նիստորականութիւնը նպատակաւորած ըլլալու զայնովորութիւնը ծաւալ կը գտնէր, և անձերու երկուսութեանց և ընտելանոց երկուսութեան միջև հաստատուած նորը պանապանութիւնը չէր բաժնը միտքերն հանգարանեցնելու: Այս կերպով Քաղկեդոնի վճիռներն առկախեալ կը մնային, և ամէնուն կողմէ չէին ընդունուած ընաւ: Անտիոքի մէջ գումարուած նոր Ժողով մը (476) կատկածեց հռչակեց աւար վարդապետութիւնը, և Բոսիլիսկոս կայսրը արգելեց անոր վճիռներուն ուժ տրուիլը: Զենոն կայսրը հետոյիքոնը հրաւտարակեց (482), որով նոյն վճիռներուն ուժ է հեղինակութիւն ունենալը կ'ըրաւ, նոր, իր կարծիքն հիմնելով Եփեսոսի մէջ (431) գումարուած Ժողովին վրայ: Վերջուպէս, Անատոլոս կայսրը, նոր հրամանա-

գրով մը (471) կը նուազեցնէր Քաղկեդոնի Ժողովին կարեւորութիւնը, զայն մերկայնելով իւրաքանչիւր հեղինակութիւնէն: Այսամէջ նր նպատակ ունէր պայքարիլ Նիստորանութեան դէմ, որ հետմաղով յունական աշխարհէն, կ'ապաստանէր Ասորական տարրին մէջ, և Կ'օգնուէր Պարսիկ թագաւորներուն իրեն թողած աղանակէն:

Հայաստան հուսու մնաց այս վէճերէն, մինչև վեցերորդ դարու սկիզբը: Եւսիքէսի Նորատ և ընդդէմ գումարուած ժողովները տեղի ունեցած էին առանց փրփրաւորութեան: Քաղկեդոնի Ժողովը որ, գումարուած էր 451 Հոկտ. 8ին, տեղի ունեցած էր Աւարայրի մեծ ճակատամարտէն ետքը: Այն ատեն երկիրը մեծ անկում վրայաթիւնն մէջ կը գտնուէր, ինչպէս նախապէս ըսած ենք: Կաթողիկոսն և եպիսկոպոսները բանտարկուած կամ տքարտուած էին, իշխանները նալածական, ցրուած, զինուորները ցիր ու քան եղած, և ժողովուրդը անբաւարար մասնաւոր: Դիւրահոսկեալի է որ այս պայմաններուն մէջ գումարանաւան վէճերը չէին կրնար գրաւել իր ուշադրութիւնը: Մելիտէ և Մալսէս, որ յաջորդեցին Ս. Յովսէփի, ի վիճակի չէին անով զբաղելու: Դիւս և Յովհաննէս (Մանդակաւնի) Կաթողիկոսները, թէև համաբաւարարեց զարգացումով և ընդունակութեամբ, վերստին գահ եղան կրօնական հալածանքներու: Եւ իբր, տեղի՛ հալածանք վերահաստատուեցաւ, Յովհաննէս հաղիւ ժամանակ ունեցաւ ինքնութիւնը լաւ, և կարգ կանոն դնելու ներքին գործերուն մէջ: Հետեւապէս զապանադի չէ, եթէ Քաղկեդոնի Ժողովը տակաւին ունէ յազում յառաջ բերած չէր Հաջորդանի մէջ, անոր գումարումէն քառարուն տարի ետքը:

Առաջին չչուկնին ևկան Պարսկաստանի կողմէն, Բարդէն Ոթմոնցի (490-515) Կաթողիկոսութեան օրով: Նիստորականներն հառապաւած էին Պարսկական Միջագետքի մէջ: Ասորիներն որ հաւատարիմ մնացած էին Եփեսոսի ժողովին բազմաթիւ վարդապետութեան և շատ կը նեղուէին

անոնց արդեցութենէն, Հայ Եկեղեցիին ուղղութեան կանոն մը խնդրեցին: Հոցի-րը, որ Ս. Սահակի հակամեծաորական սկզբունքներուն իողճաթա հեռեալ չէին, չէին կրնար հաւանիլ սեպ վարդապետական իրաւաբանութիւնն: Նկատարականները իր կրթիւնէն հեղինակութեամբ վրայ Բաղկեղդանի փառալին, որ Վ. Պոլսոյ Եկեղեցւոյն կողմէ հրաւիրուած էր, և այս վերջինն համակիր էր Աղեքսանդրոսի Եկեղեցւոյն, մինչ Հայերն ըկեղեցին խափար յորած կը մնային այն Եկեղեցւոյն: Ասիէ գտած նոյն Բաղկեղդանի փառալին վործն էր Մարկիոն-Յարս, որ մերջեալ էր Պարսիկ հայաժողովներու եղև իրմէ օգնութիւն խնդրելու եկող Հայ պատուիրակութիւնը: Մնաց որ Մարկիոնոսի դամարած փառալին մերժուած էր իր խի յաջորդներէն, և Բասիլիոսի, Չենոսի և Անտոնոսի հրովարտականքը պաշտօնապէս ժխտած էին Բաղկեղդանական հաւատոյ դաւանութիւնը: Այս պայմաններուն մէջ, դիւրին է գուշակել թէ ի՞նչ կրնար ըլլալ Հայոց ընթացքը: Դաւիթ մէջ Հայ, Վրասի և Աղաւան եպիսկոպոսներու դամարած փառալին (506), նախադաժութեամբ Բաղկեղդանեանցի տալիս, որպէս զանապաղէս հաշակեց Եփեսոսի փառալին հաւատոյ դաւանութիւնը, և մերժեց ինչ որ նկատարական էր կամ հետադարձութեամբ ինչ կը թուէր, մէջն ըլլալով Բաղկեղդանի փառալին վճիռները: Եւ Սահակն Եւփեսոսի վարդապետութիւնն ընդունելու չափ յառաջ չգնաց, և անոր անուանելու Արիտի, Մակեդոնի և Նիստորի անուններուն հետ կաշտանապէս նըզրէուեցաւ: Ասիկա՛ եղաւ Հայ Եկեղեցւոյ առաջին յայտարարութիւնը, ի մասին Բաղկեղդանի փառալին:

Ասիկա՛ կողքերը, յոյն և լատին եկեղեցիները, հրաժարելով իրենց հակառակութենէն, զայն ճանչցան իբրեւ Չորրորդ Տիմոթեական փառալ: Հայ Եկեղեցին երբեք չհամակցաւ այդ իրաւաբանութեան, որ ներքնաւոր էր այնպիսի շարժառիթներէ պոսկը ոչինչ ունէին ուսումնարանական: Անիկոս հաստատուն մնաց իր ճառալին սրբաման վրայ, և չզոռոկեցաւ ծաղր ոտաբանապաշտօնողական քննադատ մը լանկէ: Եւ

բունդակ մերժեց վարդապետական սեպաւ մը եղած յայտնութեան վրայ, ինչպէս նաեւ նախնական հաւատքը փոփոխեցաւ: Բաղկեղդանական վեհալոյսն ամենաոհեմ չափով ինչ էր լուսաւ հոռմեցական աշխարհի պատրարքութեան փոխադարձ նախաձեռնութիւն մը որ զինքը չէր շնորհաբոլոր: Անիկա չէր կրնար հաւանիլ նաեւ ինքնապաշտօն Վ. Պոլսոյ Պատրիարքութեան կամքին, որ Բաղկեղդանի մէջ իր հակառակ նախադաժութեամբ և գահերեցութեամբ համար աշխատած էր իրեն յենակէտ աւանդաւոր Թաթարեական բաղաւկին ուժը:

Դաւիթ մէջ (506) ընդունուած հաւատոյ դաւանութիւնը Բարդէսի կաթողիկոսածութեան գլխաւոր դէպքը կը կազմէ: Արիւնայն պիպրունքը պաշտօնաւեցաւ իր չորս ջարդներուն օրով ալ որքո՛ր կը Սամաւէլ Արծկեցի (516-526), Մուշէ Աղաբերկի (526-534), Ասահ Բ. Արկեցի (534-539) Քյոյաշտիս Տրքաթիցի (539-545) և Դիւսնդ Եսատուցի (545-548):

Այս իրադարձիւնն էն զորս, նշանակելի մասնաւոր ըսն մը չունինք այս իրր քառամեամնայ շրջանին վրայ: Բաղկեղդանի փառալին տալիս արուած սրբաւոր հաւատաւեցաւ Ներսէս Բ. Բաղլանանդացի (548-557) կաթողիկոսութեան օրով, Դրւիթի փառալին մէջ (554), որ բարձրագոյն հաշակեց Եփեսոսի փառալին հաւատոյ դաւանութիւնը, նկատարական մարտութեանց և Բաղկեղդանական յաւանութեանց դէմ:

ՄԱՆԱԲԻԱ ԱՐՔԵՄ. ՕՐՄԱՆԵԱՆ

(l'Eglise arménienne)

Ս. ԳԻՐԲԷՆ ՅՈԼՔԵՐ

ՇԵՐՈՎԴԻԱՅԻ ՉՈՂՇ

(ԴԻՍԿ. Զ. 17-20)

Գիշեր էր:

Միջուղ ծովուն աղաւթիկ ժայճերուն վրայ կուրծեցաւ Մաքեդոնի անձաւն գլխակը Վրդանանդի նման վրձնապարտապաղ կցիկ: Գիշերին ծոցը՝ զոր

տրեւելեան երկիրներու խորհրդաւորութիւնը կ'երկնէ, մութ եւ միանգամայն պայծառ, սղջամղջային եւ միանգամայն աստղերով լեցուն։

Դղեակին բարձրահողիաց լուսամուտներէն զէպի ծով երկարող լոյսի գէտերուն յարաշարժութիւնը, եւ արեւելեան սովորեալներէն հաճախ սուրը ուղիւղման լախած պահապան զինուորներու հապճեպ երթ ու դարձը՝ կ'ապացուցէին թէ, արտակարգ քնդունելութիւն մը, ոգեւորութիւն մը կար ներսը։

Հերովդէս Անթիպաս իր ծննդեան տարիւցը կը կտաւրէր։

Առաջինը չէր անշուշտ, բայց Հերովդէս այս անգամ Չորրորդապետի մը վայել պատրաստութիւններ տեսած էր, որովհետեւ պետութեան երկրորդ բաժինը—մինչեւ Պաղեստինը—որ կը պարունակէր Դալիլիան եւ Պէրիան, փերջնականապէս իրեն յանձնուած էր։ Բայց ապա Յովնանէս Մկրտիչը պահ մը լուսնային դատապարտելով, յաջողած էր նաեւ լքել իր նախկին կէնը, Արաբաց Արէտ խաղաղորդն ազջիկը, եւ իր եղբոր՝ Փիլիպպոսի ձեռքէն յափշտակել ամուր վաւաչող կէնը՝ Հերովդէսին։

Ասօքը էին պատճառը այն մեծահոգի զէծ խնջոյքի սարքման։ Չորրորդապետը կոչուէրին աւելի փայլ մը տալու նպատակաւ հրաշխարհ էր պաշտօնին բոլոր նախորդները, մեծամեծները եւ Դալիլիայ հազարապետները։

Արեւելեան զեղիւ կերտիտումը սկսած էր արդէն, հրաւիրեալները՝ ըստ ինչ սովորութեան միտաբան ընթաց էին իրենց սարժաւիւնները, եւ ամենց հետ ձայնակցած՝ բաժաններ կ'առաջարկէին Չորրորդապետին կէնաց։ Դիմիի բաժաններուն եւ նաուդարաններու ներդաշնակաւորութեան ազդեցութեան տակ, իսկաւորաց Հերովդէսի հրամանաւ կը սկսին անպարկեշտ ներկայացումները։ Պաշտոն կիներ՝ զիրար զերպարանցելու նազանքալից շարժումներով յայրատ անարկներ կը փոխանակէին կոչնակներուն հետ։ Դղեակը՝ պարտապարհը համալսումներուն, զրգոյիչ բնականութեան եւ պարուհիներու օժտած իւզերու

հոտէն մեղկ ու լեռն միմալորտ մը զգեցած էր։ Պարերու կալթիւններէն, շեփորներու հնչումէն եւ նուազաց դուռումէն կը թքնզար ժայռանեմ Մաքերովիւր, եւ ծովը, Հապլիս կայորներուն, խաղաղութեանց պղծախոնական վկան, իր խորէն կ'ալեծփար ու կը յուզուէր։ Իսկ չէնքին գետնայարկին մէջ բանտարկեալ մը կը հեծէր ու կուլնէր։

Յովնանէս Մկրտիչն էր այն։

Հերովդէս հակառակ ցնծութեան, փառքի եւ տափանքի դազաթնակէտը հասնելուն, պարուհիներէ յաճախակի համբուրում իր թաղ ճակարին վրայ տրամութեան կնճիւնները զիրար կը խաչատէին, եւ կարծես նուազարաններու ձայնէն աւելի ստուտիկ կը հնչէր իր ականջին, Անապատի ճշմարտութեան՝ Յովնանէսի սպառնալից տառար։ «Ոչ է օրէն քեզ աւելու զկին եղբոր քո»։

Դիշերուն կերտիտումը, խնջոյքն ու հոճոյքը միեւնոյն տափճանով կը բազմապատէին նաեւ Հերովդէսի վիշտն ու տաղնապը, խեղճ ու սիր։ «Եւ Հերովդէս թաղեալ էր ընդ նմա»։ Իր սիրը այնքան կը սաստկանար, որքան որ Հերովդէսի նկատմամբ ունեցած տափանքը կը դադարնար։ Յարմար սնիթի մը կը սպասէր վրէժ լուծելու «Եւ կամէր սպանանել զնա», որովհետեւ Յովնանէսն այն աստուածային լուգան ողբուշտ խմորներու եւ չղթաներու մէջէն ալ կ'որոտար, վիշտ դժբախտի հուրի, ծաղկն արմատին քոյճ կեցած աստուորը եւ որսից ցորենէն զամեղուն հեծանոցին մօտեւ նապը սպառնալով։ Յարմար ժամանակը եւ կամ էր... եւ դժոխային ծրարիքը իրականացնելու զանգը հնչած։ Հոնդիւնականներուն զեղխութիւնը կատարեալ էր, սղովհետեւ ըստ սովորութեան պարող կիներէն վերջ՝ կարգը եկած էր այգիլիներուն։

Հերովդէսն այս անգամ վստահ էր թէ չսկսի վիճի իր ծրարիքը։

Խնջոյքին վերջին փայլը տալու համար հրաշխարհած այգիլիներուն հետ, մօքը զրդումով պարել կուզայ նաեւ Հերովդէսի՝ Փիլիպպոսէն ունեցած Մագմէ տղջիկը, որ անտարակոյս մօքը պէս զեղեց-

կազմելու մօրը չափ համայնապես վտանգավորն արուեստն ու հրապոյրը կանուխ սովորած էր :

Սողոմէի կարտուկը «Համոյ եղիւ Հերովդէի եւ Բաղդասարացի» : Չորրորդապետը աղջկան լիտի շարժուածէն հրապարուած, լայն զեղեցկութիւնէն առնաքնուած, եւ գինիի աղբեցութիւնէն խելացնոր կը դռնէ. «Խնդրեալ յինէն դո՛ւր ինչ կտա՞ն եւ տայ քեզ . . . մինչեւ յիկն թողա՞ն որտե՞րտե՞ր իմոյ» :

Հերովդէայի սխուր զէմքն վրայ ուրախութեան լոյսը կը ճառագայթէ :

Սողոմէ, կանխաւ արգէն խորտուած, խելոյն կը դիմէ իր մօրը եւ կը հարցնէ, «Զի՞նչ ինչբերցիկ» :

Մօրը անմիջական սրտատխտըն կ'ըլլայ. «Զգլուին Յովնանու Մկրտչի ի վերայ սկտեղ» :

Չորրորդապետը կը արտմի, «այլ վտան երգմանն եւ կոչնականացն ոչ կամեցաւ անորգեղ զնա» :

Դահճը կը զրկէ բանտին խորշը :

Հինգ վայրկեան հաղիւ . . . եւ ահա ունին ինչ կը վերջանայ . . .

Հանդիսականները ակնդէտ կը սորտեն. խելոյն կ'երևի զանապետը՝ քիչ առաջ խնջոյքի սեղանին իբրեւ սպաս դարձած, ծուած սկսեղ մը իր ձեռքը բռնած, ուր տրեւի ճապարկներուն մէջ կը լողար դուրս մը :

Աղջիկը կը յափշտակէ իր մեծ հուրեր, եւ ուղղակի կը հրանցնէ իր մօր, որ ուրախ էր իր կենաց փռչին, հեշտութեանց արդեւքն եւ երեսակայութեան խանգարիչին, վերջապէս իր հանգիստը վրդավոյ աղբ ձեւադի մահուան համար :

Կը սահմակին հանդիսականները, ամբողջ զգեսակը տրտւթեամբ կը համակուի, ու այդ հակայ Մաքերովելին մէջ անկարեկիրն եւ անգուժն Հերովդիտ միայն, այլ եւս վտան իր կիրքերը համարձակ վայելելուն, կը ցնծայ ի տես անմեղ գոհին գլխուն, որ սեղանէն թափած կերակուրներու աւելցուքներուն, եւ աղանդներու կեղեւնի բուն մէջ նետուած կը կակաղէր. «Ո՛ր է քեզ օրէն առնուլ զկին իղբօր քո . . .»

ՍՈՒՐԵՆ ԴԱՐԻՆ ԳԱԼԵՐՅԱՆ

Սկիւտայ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅՈՒԹԻՒՆԸ Ե. ԴԱՐՈՒ ՏՈՒՐԵՆԻ

(ՂԵՒՈՒԹԵԱՍԻ ԵՒ ՎԱՐԴԱՆԱՔ)

Մեծ աղբ մը չէնք, բայց հոտուած ուսած է թէ կենտուտի եւ ընդունտի աղբ մըն ենք :

Ովկիանոսներու եւ ծովերու տարածութիւնը չունինք, ոչ ալ անոնց ունեցանուած փոթորկումները. սակայն արագընթաց գետակներու հոսանք կարենք կ'անցնինք լիտնեան ու ձորերը, դաշտերն ու մարգերը եւ թէ ապաւաններու լաղխինք, անոնց մեր ճամբէն շեղելու կ'ուզենք ամէն միջոցով անոնց մէջէն ալ ընթացքնալ շարահողի : Այդ ընթացքը սեղ մը չի յոնարիր սակայն, եւ անվերջ ու յաւիտեական ըլլալ կը թուի : Պիտի գայ օր մը արդեօք՝ երբ այդ ընթացքը ընկուղուի եւ վերջ գտնի : Երբէք չեմ կրնար հաւատալ եւ, քանի՞ մեր աղբը շարունակէ աղբի մարտիրոսի կտանքը :

Մարտիրոս աղբ : Ի՞նչ տարօրինակ բացատրութիւն պիտի խորհին ամէն անոնք որ կտանքը ամէն բանէ աւելի կը սիրեն : Եւ հաւատալ չկեղեցի : Ի՞նչ յիմարական կոչում, պիտի մտածեն ամէն անոնք՝ որ նիւթականը ամէն բանէ առաջ կը փնտենան :

—Աղբութիւնը տարբեր բան է, Եկեղեցիցին, կրօնքը տարբեր, Կրօնապետներն ու երկային նորեւեկ տեսութիւնները : Մնացեալին մէջ Եկեղեցին պահպանելու համար աղբը կորսնցուցեր ենք, կը դռնն շտուր՝ կարծես հասկցնել ուզելով թէ ներկային մէջ ալ աղբը պահպանելու համար Եկեղեցին կորսնցնելու է :

Երկուքն ալ իրարմով միայն կրնան տղրիլ, կրնանք եղբակցանք մնալ, եթէ ծայրայեղութիւնէ չդուշանալու համար չընենք թէ մէկուն կորուստը միւսին աւերն է : Վկայ մեր այս շղարկագութեան անցնող եօթնեակին կատարուած երկու անգային տեսութեան թիւնները :

Ղեւնդեանք և Վարդանանք ներկայացուցիչներն են ամբողջ ազգին, և ոչ թէ «կնառն» որ միմիայն քաղաքական նպատակներու և թերեւս ազգային սնկախութեան ուղիք հետամուտք։ Ազգային ամբողջական ներկայացուցիչներ են գործնական Տրդատ և Գրիգոր, Վառնապուհ և Սահակ ու Մեսրոպ, Վանան և Մանգականի, և այսպէս յաջորդաբար մինչեւ մեր օրերը, և մինչեւ վերջ՝ որքան ատեն որ ազգը աւելի կամ նուազ փառքի օրեր ունեցած է և պիտի ունենայ։

Կրօնականներով կրնայ ազգ մը կործանիլ, քննադէտնաւ վերականգնիլ։ Բայց կրօնքով ու եկեղեցիով երբէք ազգութիւնը չի կորսուիր։ Նոյնքան ալ ճիշդ է թէ քաղաքագէտներով, վճռողագէտներով, բուհականներով կրնան աշխարհներ աւերուիլ, ինչպէս նաեւ շինուիլ, բայց ազգութեան և յարակից գաղափարներով երբեք մագլ՝ վտարգ մը չայտատիր։

Եւ դարձեալ մեր մէջ Ոսկեդար անունը կը կրէ։ Եւ որքանեւ արժանի է այդ յարձուրդուն, թէ՛ իր մէջ կատարուած խիստ փայլուն գործերուն համար և թէ իր տեսակէն ուրիշ գործերու նուազութեամբ համար։ Բայց եթէ բոլոր գործերը խորհրդանշող աւանդին գոյներ լլայլին, հաւանաբար պիտի չաւարէինք հինգերորդ դարը պատկերացնելու համար, երանգագնակէն լոկիկ կարմիրը պէտք էր տանել թէ տրիւնի կարմիրը։ Եթէ արդի ժամանակներու համար ըլլար, թերեւս խորհէինք թէ առանց ասկիկ պատկերապատ չըլլար ոչ մէկ կերպով։ Բայց Բրիտանի հինգերորդ դարուն համար դործը կը տարբերի։

Այդ ատեն կը տեսնէք խեղճ և անկախութիւնն ու ինքնօրինութիւնը իր ձեռքով վտանգած Հայ ժողովուրդ մը, որ իր պատմական ընթացքին մէջ կը զծէ նախ գրականութեան ոսկեաւելի մը և յետոյ ինքնագիտակցութեան արիւնի ճամբայ մը։ Սահակ և Մեսրոպ՝ Վառնապուհի մը հետ ձեռք ձեռքի սուտած կ'առաջնորդեն Ոսկեդարու Հայ կեանքին։ Յովսէփ և Ղեւնդեանք՝ Վարդանի մը լծակցելով կ'ապստան և կը խրին սա արիւնի և սրտաւիրքի ճամբուն

մէջ՝ որ երկուով կը պայծառանայ և կը յատկուի, երբ Վահան Մամիկնեան և Յովհան Մանգականին կը սկսին յարապակի ազգին։ այդ ճամբան կը պայծառանայ ինչպէս ոսկին հալոցի մէջ, և կը յատկուի ինչպէս արիւնը թութերուն մէջ։ այդ ճամբան կը պայծառանայ և կը յատկուի այդ ես քանի որ ազգն ալ ամբողջ դարու մը հետ հետեւ կեանքին մէջ լաւ մը եփեցան և փորձուեցան։

Բայց այս ամէնը չպիտի համոզեն ունեք որ բան մը քսած ըլլալու համար միայն կը կրկնեն թէ Ազգը եկեղեցիին և րեսէն, կրօնականներու ձեռքով, կործանուած է։ Այսպիսինքու համար մէկ պատասխան միայն ունինք։ Կըսէ գոտեմարտի բեղէք Եւ դարու պատմականն ու պատմական դէպքերն ու դէմքերը։ այդ ուսումնասիրութիւնը միայն կը բաւէ որ գիտատեսէք թէ կրօնական և քաղաքական ուժերու գործակցութիւնը ինչ հրաշքներ կը գործէ, և կամ թէ եկեղեցականներու և աշխարհականներու տարակարծութիւնը ինչ աւերներ կը յառաջանէ։

Հինգերորդ դարուն եթէ մեր գիրքը չստեղծուէր, ինչպէս կրնայինք պահել մեր ինքնագոյնութիւնը։

Հինգերորդ դարուն եթէ մեր կրօնքը և եկեղեցին չպաշտպանուէր, ինչպէս կրնայինք յուսող թէ Պարսկի իր կրօնքը մեր տոճարներէն ներս մտցնել և իր ատրուանը մերկ եկեղեցիներուն մէջ կանգնել վերջ, չպիտի ուզէր փոխել մեր լեզուն, ալ և սցրելով մեր նորագիր մատենաները, ունայ անդ մեր աչքերուն առջև չպիտի քանար իր դէտաւէտաններն ու իր գեղին գիրքերը։

Հինգերորդ դարուն մենք վերածնունդ մը տեսնեցած ենք։ Մերքեկեղեցականներու ձեռքով և քաջ աշխարհիկներու կնքանքութիւնով մկրտուած ենք և եթէ կ'ուզէք ասկիտ աւագանի մէջ, բայց ջուրի փոխան արիւնով մաքրուած ենք։ Հապա միշտ ունք, ըսէք թերեւս, բայց սա Սուրբ և Փառ Ղեւնդեանքն և Վարդաններուն օծութիւնը չի՞ բաւեր միթէ։

Ներկայ քառանկորով դարձնելով նրանք զին թառնակներէն է, կարծես հեռաւորութեանը, չափ ալ անոր լնորոշ յատկութիւններէն շատ բաժնիորոնցուցած է ժառանգականութեան օրէնքով և Այսպէս որ ըսողներ կան թէ մեր ազգը փճանալու, կորսուելու մօտ է և Աւստի որ ասիկա հաստատել ուրիշ ուսած եմ և Այս, այս ազգը կորսուելու մօտ է և բայց ուր որ երբեմն գետակներ և գետակներ սակ կ'անցնին և անտառաներու տնայութիւններ կորելէ վերջ ուրիշ կողմէ մը դարձեալ դուրս կ'ելլեն և Այսպէս ալ մեր ազգը ամուլ և ամալի դիմելի մը ստորերկրեայ, խտերը կ'անցնի այս տարիներուն մէջ և երանի թէ օր մը դարձեալ լսելն քի լոյս-աշխարհ դալը և ես ասորով եմ թէ իր առաջին դիմելիներ պիտի բլլան Աւստի և անց և Վարդանանց նախնաւոր յատուկ շարահաններուն և Որ յոռաշաղագնիս և «Երանարդ» ին ցնծալից հնչիւնները :

Այս յետադարձ ակնարկէն վերջ, ապա սիրալի վերջիցումէն վերջ, մենք պիտի կրնանք նոր կեանքով և նոր ձիրքերով օժտուած բնիկացիներ շարունակել :

Ապահովաբար, Հայ փղական ուսն ալ պիտի օժանդակէ մեր ազգին վերելու օրին և պատմութեան մէջ կոտորակիք դերին : Մեծաւ աւելորդ չենք համարի հոս խարդամանաբար ներկայացնել իրենց :

Հայ կիներ հինգերորդ դարուն :

ԴԱՅՐԻՒՆ

ՀԱՅ ԿԻՆԸ ԵՐԱ ԴԱՐՈՒՆ

(ՈՍԿԵՆՂԻ ՍՂԱՇԻՆ ՂԵՐՁԻՆ ՀԱՏՈՒՄԻՐ)

ՀՏԻԿԱՅՔ ՓԱՓԱՍՈՒՆՔ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

Չեմ կրնար թուել իողոր Հայտատանի մէջ պատերազմի տունն միանայնորուն, բանտարկուածներուն և երանելի նահատակներուն կիները, վառ գի ինձ ծանօթ եղողներէն աւելի են անմահօթ մնացածները : Ազնուական և խնարհ դամակարգերուն մէջ, անմահացմէ հինգ հարիւրի չափ յոյսանէ յանուանէ կը հանգնան :

Երկուային նախնաւորաւորութիւնով մը

առ հասարակ աշխարհ ալ վառուած, իդր սպարողներէն վար չմնացին անմահ : Արդե՞հ հետեւ թէ՛ մեծերը և թէ՛ խոնարհագոյնները հաւատքին տաքինութեան միեւնոյն պակասը հազան և երեսն սովորական ազգաւորութեան և փափկութիւնը երեսը չիշխեցին, հազաւ այս նշխարէն կեանքը տաժանեղով ապրող, չինական ծնունդի սովորական վիշտերուն տոկացող մարդերու պէս ու անմահ մեկի՛ տառապանքներու համակերպին :

Ոչ միայն յախտնականին յոյսը դիմելը պօրայնելով հազարաւոր միւլիթարեան, հապա մարմնաւոր նեղութիւններով ալ կրեցին իրենց ծանօթ բնոր, քանի որ թէ՛ անմահացմէ իւրաքանչիւրը իրեն յատուկ սպասաւորը ունէր, բայց անմահ մէջ կարելի չէր օրոշել թէ՛ ո՛րն է տիկնիկը և ո՛րն է նամիշար, երկուքն ալ միեւնոյն կերպով հազուած էին և երկուքն ալ գետնները կը պառկէին և մէկուն համար անկողին կը ձգուէր, մըլէհետեւ խտանդէնը մեծաւքանակէն չէին դատեր անգամ, չոր խտան մութ գոյնը նոյն էր գլխաւորաւորուն սեւութեան հետ :

Անոնց համար անմահին անու չա՛նա՞մ և անտարժապեր համեմներ չկային, ոչ ալ յատուկ խոնարարներ՝ ինչպէս կը վայելէ ազնուականներուն : Ամէն ինչ հասարակաց էր : Անոնց կիրակամուտը նման էր անտառի մէջ ճգնողներդ կիրակամուտին, ոչ մէկուն ձեռքին ջուր կը թնփուէր, ոչ ալ պզտիկները մեծերուն արրիչը կը բռնէին : Փափկաւորն տիկնիկներու ձեռքը օժտու (*) չանցաւ, և արաքութիւններու տունն գետարթացնող անուշաճութիւն մը իրենց շորուեցան : Անոնց սոջիւ յիշուած պիտիներ չեկան : Անոնցմէ ոչ մէկուն հրաւիրուկը չգնաց ազնուականները անոնց արտը կանչելու համար : Անոնք չիշխեցին անգամ իրենց վրայ գուրգուրացող անուցիչները և կամ իրենց սիրելի հարազատները :

(*) Տառնը չորս դար տաճի գործածուած յարգի օժտան էր, մեր պատմութեան հասարակ աշխարհ (— թղթերէն և օճէն) :

Փաշի և փաշ լեցաւ նոր հարեւր՝ քողապատ խոցեկուն մէջ և անոնց ամուսնական տնտեսը սորդեր աստացի կտակցին անոնց ճաշարաններուն բարձր լեզմոցները կործանեցան և կերտ խուճի անոթները տակնաւ վրայ եղան փլան, փրշրոնեցան անոնց պալատները տապալեցան, հաւերակ դործան անոնց սպանով ամբուսթիւնները Զորացի, պախացի անոնց անհաշարայր ծաղկեալները, և արմատախիլ եղան անոնց զինեղեր սպանները, սրթատուները:

Իրենց չափերով տեսան աստացի ամբուսթիւն քաղաքները և իրենց սկանչներով շտեղծեցին սրբակիւններու վշտալիք չարչարանքը Գոնձերին արքունիքէն պալատեցան և իրենց վրայ դարձ փ անդամ չմտայ:

Տիկնո՛ւք փափկատունք Հոգսց աշխարհին որովք լոյսնալիս բազմոցներու և գոհաւորութիւնք փրայ հանգստացած և պաշտօնած էին, հիմա միշտ բալիկ սաքով և քնիւրով տղոթալայր կը յաճախէին և սաւանց ճամձարանդու, ուխտաբուսթիւններով համբուսթիւն կը խնդրէին մեծ նեղութեան միջոցին:

Անոնք որ իրենց մանկութենէն ի վեր հորթի աղեղներով և որս համարաններով քնած էին, վայրենիներու նման ցափաղանց սրտախտալով կ'ընդունէին բռնաբարեկէ կերակուրով իրենց տարտաւար և երբեք չէին յիշեր սովորական փափկութիւնը: Անոնց մարմիններու մորթի հիւսիս վաճաղից ցոյցերը արեւին տակ աչքեցան և ամբողջ գիշերներ հոգին վրայ սալ թափուեցան:

Իրենց շրթներուն մշտնջորտ մրմնալիները տաղմուններն էին, և մարդաբնական լնթերցումները իրենց համար կանաքեղ մթնթաղութիւնները: Զիրուք հասկցայ և հաստար լծակիցներու նման զոյգ զոյգ միարանեցան արքայութեան սկիւղ ուղիւ արձելու համար որպէս զի սաւանց չեղելու համար խաղաղութեան հաւանալիստը: Կանաչի ախարութիւնը մտցոյն և հաղեւոր արտաբերական մէջ անոնք առնական թաղութիւն տաքան կոտեցան, մարտնչեցան:

Ներսէս մահացաւ մեղքերուն հետ, իրենցմէ կտրեցին, հանեցին և յեաւեցին անոնց թաւաքի արմատները: Կործանութիւնը չափեալները միմեմութիւնով, և նախանձին կողմնացաւ լուսնի քաղաք սիրով, ազանութիւնը արմատաքի խեղիւն սրով չորցան անոր ոտներուն մահաթիթ պալատները: ամբարտաւանութիւնը Զախալիսցին խնարհութիւնով, և ոյգ իսկ խնարհութիւնով հարաւ կրկնաբերձ վաճառութեան իրենց աղօթքով բաղին կրկին քի փափկութեամբ ուսնելը և սուր հայցաւածներով ազատարար հրեշտակներ իջեցին անկէ: հետեւէն աւախալեցին և Բարձրեղ Սաստառք փառաւորեցին:

Իրենց մէջ դանուղ այրիները առաքելու թիւնով վերադարձ հարմարացան և այրիութեան սուգը հանեցին իրենց վրայէն: Իսկ չղթալկալ բանտարկութեաններուն կիւնները, կամովին զսպեցին իրենց մարմնաւոր ցանկութիւնները, և սուր արտաբերականներու չարչարանից եղան: Իրենց սղութեան մեծեղով նախապիտան համեցան, և հետեւէն մթնթաղ վարդապետներ եղան բանտարկութեան: Իրենց մատերուն աշխատանքով կերակուեցան, և թագաւորէն իրենց արտած առնիկ տարուէ տարի իբրեւ թոշակ տանելով իրենց այրերուն գրկիցին: զանոնք մթնթաղութեան համար Իրենք ալ նմանեցան ան տանն ճալուրեն: Իրենք որսը առանց մտաւորի, երգերու քաղցրութիւնով կ'ապրէին և միայն օդը ծծելով կենդանի կը մնան, և անմարմին հրեշտակներուն օրինակը կ'ընծայեն մեզի:

Շատ մը ձմեռներու մառն հալեցաւ, դարուն կիւս ու նորեկ ծիծեռնիկները միտալն բերաւ: աշխարհասէրները սասնք տեսնելով ուրախացան, բայց անոնք երբեք չկրցան տեսնել իրենց սրտախտոյնները: Զարուհի ծաղիկները անոնց յիշեցաւ ցին իրենց սպասկաւոր ամուսինները, և աղբերակին կարօտեցան տեսնել զանէ անոնց դէմքերուն ցանկալի գեղեցկութիւնը:

Որսի բարակները հասան և սրտալիներու արշաւանները վերջ դրան: Յիշատակութիւններով անմտաց մկտցին ա-

նոնք, բայց տարեկան տոնախմբութիւնն ներք զանանք չբերին հետուն։ Սեղանին վրայ անոնց նստած տեղէն նայեցան և արտառուեցին, և ամէն ակն անոնց անունը յիշեցին։ Անոնց անունով շատ արձաններ կանգնուեցան և խրաքանդութիւն անունները ատոնց վրայ նշանակուեցաւ։

Թէև այսպէս ունէն կողմէ փոթորկած էր անոնց միաբեր, բայց երբեք չթուլցան և ետ չկեցան բարձր տաքթիւնութիւնէն։ Դուրսէն սպասար և տառապող այրիներ կրթութիւն, բայց ներքնապէս երկնաւոր սիրով զարդարուած և միութարուած էին։

Երբէք չհարցուցին հետուն և կողմէ կողմէ թէ ի՞նչ պիտի տեսնենք մեր սիրելիները, հասաւ Աստուծոյ ուղղուած իրենց ուղիքներուն նպատակը այն էր որ սկզբունքներն պէս քաջութիւնով վերջապէս լեցուած երկնաւոր սիրով։

Թարգմ. Գ.Ա.ԶԲԻԼ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

ԿՐՈՆԻ ԴԱՍԵՐ

Գ. (')

Մուշեղ եպս. բառերու սխալ թարգմանութիւնն ուղղել մտածելու պահուն, չգլար թէ ի՞նչ անհեթեթ մտորութեան մէջ կը գլորի երբ կ'ըսէ (էջ 34)։ Երբորդութիւնը նշանակող և Տերաւղիմանսի կողմէ դարձածուած Trinité բառը հայերէնի մէջ քերականական բառերու տանձանին մէջ չէ թարգմանուած, երբ Երբորդութիւնը բառով մը բացատրուած է, աւելի լաւ պիտի ըլլար թերևս փոխանակ դատական ձևով Երբորդութիւն թարգմանելու, ըսել Սրբապետութիւն։ Ամենէն ճիշդ թարգմանութիւնն է դադափարին, զոր դարձածած են Լուսաւարչէն սկսեալ բոլոր Հայրապետք Հայ

Եկեղեցւոյ։ Մուշեղ եպս. ինքն ալ կը խստաւորանի թէ բառին կազմութեան չենք նայիր, այլ աւելի դադափարին անհեթեթութիւնն մէջ երեքութիւնն ի միութեան կամ միութիւնն յերեքութեան դադափար չի կազմուիր, այլ սողի երեքութիւնը գաւորտաւորուած, որ հակառակ է ընդհանուր Քրիստոնէական վարդապետութեան և երեքանձեայ Աստուծոյն միութեան։

Երբորդութեան սոցն դադափարը կը սորվեցնէ մեզ շատ յստակ և շատ որոշ կերպով Յովնանէս. «Զի երեք են որ վկայեն յերկինս, Հայր, Յանն և Հոգին Սուրբ, և երեքնք մը են» (Յովհ. Ա. թագթ 6. 7)։

Մուշեղ Եպիսկոպոս ամենէն զուցայայտ և որոշակի յայտնուած վարդապետութիւնները տարակոյսի տակ թողուէ կամ մերժել սովորական բաներ նկատած է։ Բայց մենք թողունք այս պարագան և անցնինք մեր պատասխաններուն։ Կ'ըսէր թէ «որչափ որ ընդհանուր հասաւոր մտիկ կը տարվեցնէ թէ ոչինչէ սակզեց Տիեզերքը, բայց Ս. Գրոյ մէջ բայց ի լաց և յայտնի կերպով այդ տեսակ վարդապետութեան մը չենք հանդիպիր»։

Ահա Ս. Գրոյ բացարձակ վկայութիւնները, զորս անտեսած է անշուշտ Մուշեղ եպիսկոպոս. — «Ի սկզբունէ արար Աստուծոյ զերկինս և զերկիր» (Մատեղք. Ա. 1) «Բանդի զի արք կայր ինչ, եթէ դու ոչ կամէիր» (Իմաստ. ԺԱ. 26)։ «Իսկ որ դու մենայն արար, Աստուծոյ է» (Երբ. Գ. 4)։ «Զի նովա հաստատեցաւ ամենայն որ յերկինս և որ ինչ յերկրի, սքերելին և որ զքն երևա. . . ամենայն նովաւ եղև և ի նոյն հաստատեցաւ»։ (Կողոս. Ա. 16—17)։ «Ի սկզբունէ էր բանն և բանն էր առ Աստուծոյ և Աստուծոյ էր բանն. . . ամենայն ինչ նովաւ եղև և առանց նորա եղև և ոչ ինչ որ ինչ եղև. . . աշխարհ նովաւ եղև» (Յովհ. Ա. 1—10)։ «Ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ Աստուծոյ ընդ մեզ Որդւոյն, որ ետ ժառանգ ամենայնի, որով և դաւախեանաւ արար» (Երբ. Ա. 2)։

Կ'ըսէ թէ «Ս. Գրոյ հին կտակարանին մէջ որչափ որ հրեշտակաց գոյութիւնը իբր իրողութիւն ներկայացած է, այսու հան-

(') Ա. և Բ. յօդուածները տես ՏԱՃԱՐ, Ա. տարի, թիւ 32 և 33։

դերձ անոնց մասին տակաւին ճշգրիտ տեղեկութիւններ կը պահպանէ» . և կը յաւելուի . «Ներայեցեաց թղթոյն մէջ առաջին ննդամ հրեշտակները իբր հոգի կը ներկայացուին (Ա. 14) և Նոր Կտակարանն ալ կարծես կ'ուզէ հաստատել թէ իւրաքանչիւր մարդ սեպական հրեշտակն ունի հին հեթանոսական հաւատալիքներու համաձայն» :

Մեր պատասխանը . — Յոյ գիտէ թէ երբ չորրորդ օրը լուսաւորք ստեղծուեցան՝ հրեշտակները կ'օրհնէին զՍատուած և կը փառաբանէին, ուստի և յառաջադրոյն լուսեղծուած էին անոնք, ինչպէս ընդունուած Հայաստանեայց Եկեղեցիէն, զոր Ծնորդաւին կ'աւանդէ մեզ . «Նորաստեղծեալ բանն յանէից ի սկզբանէ ղերկինս երկնից և ղերկնայն զօրս անմարմնոց իմանալեացն զլուսորթնաց» : (Ժամագիրք) : Անոնց գոյութեան ճշգրտութեան աւելի ինչ փաստ և ապացոյց կ'ուզէ երբ Հնգամատեանէն մինչև Մաղաքիա անոնց գոյութիւնը և պաշտօնակատարումը բացայայտ կ'երևի : Տրամաբանական անհրաժեշտ ճշմարտութիւն մ'է որ մարդ եթէ կը շնչէ ապա կ'ապրի, մենք չենք կրնար ըսել թէպէտ կը շնչէ բոց չապրիր : Եթէ անոնց գոյութեանը չի հաւանոր, գոնէ գործքներին՝ պաշտօններն տեսնելով թող հաւատայ, այսպէս կ'ընէր հաւ Յիսուս, իրեն հաւատարմացողներէն . — Եթէ ինձ չէք հաւատար, գոնէ գործոցն հաւատացէք . գործքը՝ գոյութիւնը հաւանանող պատճառն է : Եւ յետոյ, Նոր Կտակարանն ալ ոչ միայն չէ ժխտած հրեշտակաց գոյութիւնը, այլ ընդհակառակն հաստատած է Քրիստոսի և Առաքելոյ խօսքերովը : (Աւետարաններ, Գործք Առաքելոյ Յայտնութեան) :

Իսկ երբ կ'ըսէ թէ հրեշտակները միայն երբայեցեայ թուղթոյն մէջ առաջին անգամ հոգի կը ներկայանան, պիտի տաւ ջանքերս բանալ Սաղմոսը որպէս զի համոզուելի թէ՛ առաջին, անպատ և այն ալ Պօղոսի թղթոյն մէջ չէ յիշատած միայն, այլ և Հին Աւետարան մէջ ալ հոգի ներկայացած են հրեշտակները : «Եւ որպէս զհրեշտակս իւր հոգիս» : (Մաղմ. ՃԴ. 4) : Ս. Գրքը անոնց դատարարութիւնն ալ զիտէ . «Զի

նովաւ հաստատեցաւ ամենայն . . . եթէ առ իստք, եթէ աչքութիւնք, եթէ Պետութիւնք, եթէ իշխանութիւնք» : (Կորն. Ա. 16—17 : Տես նաեւ Եփես. Ա. 21) :

Այսպէս հաւատացած են նաեւ Հայրապետ Եկեղեցւոյ . «Այլ զի երեւեցին նորա փառքն որ արարածովքս իմացեալ պեւանի անմարմնոց և մարմնաւորաց» : (Յաճախ . Ճառ Բ.) :

Մուշեղ եպ. կը գրէ թէ «Հին Կտակարանին մէջ մկրտութեան դրութիւնը երբեք գոյութիւն չունի, անիկա չկազմիր կրօնական արարարութեան մասն» :

Կը պատասխանենք թէ՛ հոյն մէջ կայ միայն ստուերն խորհրդոյն, զոր կը կատարէր ի նորումն ըստ բանիցն Յիսուսի . «Զի օրէնքն ի ձեռն Մովսէսի ստուա, շնորհք եւ իմաստութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղիւ . . . ոչ եկի լուծանել զօրէնս կամ զմարդարէս, այլ լնուլ» : (Մատթ.) : Մկրտութեան Խորհրդոյն ստուերն Հին Աւետարան մէջ գործածուելու մասին Պօղոս բացատրէ կը գրէ . «Զի հարքն մեր ամենքին ընդ անպաշէն էին, ամենքին ընդ ծովն անցին, եւ ամենքեան ի Մովսէս մկրտուցան յամպն եւ ի ծովն» : (Ա. Կորնթ. Ժ. 1—3) : Ըստ այսմ եւ Ծնորդային կ'երգէ . «Մկրտին յամպն եւ ի ծովն Իսրայէլ հին» : (Ժամագիրք) : Իրաւ է որ մկրտութիւնը Հին Յիսուսաց մէջ Քրիստոնէական բմբանումով չէր որ կը կատարուէր, Քրիստոսով միայն պիտի հաստատուէր Մկրտութիւնն ի նորեւ սկզբնական մեղքէ . ուրիշն Քրիստոս հաստատուած մկրտութիւնը կը պարզուէր մեղ սկզբնական մեղքէ սրբութիւն : Հին Օրէնքն ալ տառաւածային հրաման էր, եւ կը պարզուէր ողորդութիւն, ըստ ստեղծութեան սրբութիւն՝ կրօնական կեանքի նախընտրելի պաշտօնէից : Պետացեաց արարողականն անհրաժեշտ պայման էր . ուրիշն հինն ու Պարբ կը պարզուէ մեղ սրբութիւն՝ տարբեր գիծերու վրայ, եւ ինչպէս նորը մկրտութիւն է և կրօնական արարողութեան մաս կը կազմէ, այսպէս և հինն մկրտութիւն է, եւ կրօնական արարողութեան մաս կը կազմէ անպայման եւ սրբաւորութիւն, զի տառաւածային հրամանն են

նրիւնքն իւր Էջիմն դանք որոնել Զին Ռեխտին միջնութեան պահանջը եւ անոր կրօնական հանգումները: Քաճանդանքը պարտաւոր տրեւելու կրօնական մաս կը կազմէ, ինչպէս նաեւ քաճանդանքի նոր յատկանշող զգեստացի գոնազանքները:

Հնգամասնին մէջ կը կարգանք:

«Եւ խօսեցաւ Տէր ինդ Մովսէսի եւ աւէ... եւ որբեացն զնոսա քաճանդանաւ նոցա ինձ... եւ զհարսն եւ զարդիս նոցա մասաւնցեալ ի զաւան խորանին վկայութեան, եւ լուսացես զնոսա ջրով: Եւ աւետալ պարտաւորեանս զպէտեցես Ս. Երանի եղբոր քուս, եւ զպարտեցոս պճշտաւորս ի վերայ ներքնակայն եւ զվական եւ զաւիտակն, եւ պիտեցես զաւիտակն ընդ վական, եւ զպէս զխոյնն ի վերայ զվայ նորա, եւ զիցեալ զիմեանս սուրբ ի վերայ խորանին, եւ ապիս յիւզայ անտի օծման եւ արկցես ի զլուսն նորա եւ օծցես զնա... եւ կպցի նոցա այն լիճ ի քաճանդանքիսն» (Եւք. ԻԵ. 1. ԻԹ. 1—9, Դեաւականք Թ. 6):

Քաճանդանաւոր համար կը տեսնէք թէ կարգ մը արարողութիւններէն զոտս ինչպէս օծումը, նոյնպէս լուսացումն ջրով անհրաժեշտ պայման էր Զին Ռեխտին մէջ եւ կրօնի պարտաւորիչ մաս կը կազմէր: Եւստիմիոս Կիւրանին, սեղանին, սպասուց արքութեան պայման էր. «Եւ օծցես չաւր զխորանն եւ զամենայն ինչ որ ի նմա իցէ, որբեացն (ջրով լուսա) չաւր զպիտակ... եւ օծցես զսեղանն ու զսեղանայ եւ զամենայն զկան նորա եւ սրբեացն զսեղանն» (Եւք. Խ. 6—10: «Եւ եղ. զաւտանն ընդ խորանն վկայութեան եւ ընդ սեղանն եւ արկ ի նա ջուր (եւրոպական զմապիրն) ջուր աւ ի լուսանայ», եւ լուսացես ի նմանէ Մովսէս եւ Ահարոն եւ որբիք նորա զձեռն եւ զոտս իւրեանց: Երբեմն մասնիցեն ի խորան վկայութեան կամ յորժամ մերձեանացեն ի սեղանն պաշտել, եւ լուսանայն ի նմանէ, որպէս հրամայեալ Տէր Մովսէսի» (Եւք. Խ. 30—32, տես նաեւ Եւր. Լ. 17—20): Սեղանին ծառայելու համար կը տեսնէք որ անհրաժեշտ պայման էր լուս-

յութը յաւազանէն. կրօնական մաս չի կազմար այն:

Եթէ մէկը ուսմելի կամ ուսուցիչ անաւանց չի կրնար զոյի կամ վերջնէ, պիտի կը համարուի. որբեացն համար պայման էր լուսացումը: «Եւ որ քաճանդանք ի մեռելոց նորա լուսացէ զձորան եւ զպիտակ լիցի մինչեւ ցերեկոյ» (Դեաւականք. ԺԱ. 40):

Բզրատութեան որբեացն պայմանը: Այս օրէն կոչի ըստաւ յաւար յորմ սրբեացի... եւ թացցէ զնոսա եւ զաւան կինդանի յարեւն հաւան տղանկոյ ի վերայ ջրայն կինդանայ: Եւ զանկոյն ի վերայ սրբեացն ի ըստաւութեանէ Խօթն անգամ, եւ սրբեացն զնա... եւ լուսացէ պարեւան զձորան իւր, եւ լուսացի ջրով, եւ սուրբ լիցի... եւ յաւարն Խօթն արդի... ուղղեացէ զձանդերան իւր, եւ լուսացէ զմարմնն իւր ջրով եւ սուրբ լիցի... եւ կացուցէ քաճանդան որ սրբիցի զայն որ սրբիցի, եւ զայն սուրբ խորանին վկայութեան... եւ արացցէ քաճանդան զվան մեղացն: Եւ քաւացէ քաճանդան վանն ու նորիկ որ սրբեացն իցէ ի մեղաց իւրայ... եւ սրբեացի» (Դեաւականք ԺԴ. 6—20):

Ինչպէս կը տեսնուի, կարգ մը արարողութեանց հետ լուսացումը պայման է պարտաւորիչ իւր մեղաց հաւանք եղող ըստաւութեան արքելու, կնիական մեղաց քաւութեան արքելու ի ձեռն քաճանդան: Ասիկա արքելու կրօնական արարողութեան մաս չի կազմար: Երբ Ասորոյ իշխանն Նեեման կ'իմանայ Իսրայէլացի զերուհին թէ Սամարիոյ մէջ Ասորոս մարդարէն կրնայ բռնել իւր քաւութեանը, կուգայ աւ Երիւ, որ կը հրամայէ. «Երբ լուսա, Խօթն անգամ ի Երուսաղէմ եւ զարձցի մարմնն քո եւ սրբեացի» (Դ. Թ. 10): Բայց Նեեման կը բացականայ եւ կ'ըսէ. եւ կը կարծէ թէ իր Ասորոս մարդ անաւան ձեռք չ'ըրաւ պիտի զնէ եւ պիտի որբեացի: Իսկական Ասորոս եւ Փաշտարի զհոտը Իսրայելի ջարեւէն աղէկ են ինչպէս հան չ'երթան եւ չ'ուսուցանու. բայց ծառայի խորհրդով զնայ «Արեւելու

ի Յորդանանէ ելլին անգամ ըստ թանին և զիսէի, և զնորձաւ մարմին նորա իբրեւ զմարմին մանկան ժողովոյ և որեկեալս (Գ. Քաղաքացի Ե. 14):

ՀԱՐԱՆԱԿԱՆ ԲՆ. ԻՐԱՆԻԱՆԵՐ
(Ծննդեալ յաշտոյ)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՊԱՏՐ. ՏԵՂԱՊԱՆ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տեղապար Սրբազանը չարախոսեցեալն նախադրանքաւն, յնկերակցութեամբ կրօն. ժողովոյ Առնեապետ Տ. Մաշաբիա եպ. Տէրաշեանի, Տ. Գրիգ. Ս. Վ. Բա. զաւր ժողովոյ անդամ Յակոբ Էֆ. Պո. յաճեալն և գործակատար Գառնի Էֆ. Վարդապետ Հազար փաշա, և ներքին գործոց նախարար Սալիլ պէյ, շատ սիրալիր ընդունելութիւն մը բրին և Սրբաշեանի հետ, և ամէն աջակցութիւն խառնացան, օրէնքի սահմանին մէջ, ազգային կողմէ ներկայացուելիք խնդրոց կարգադրութեան համար: Եւ այնքան սիրալիր ընդունելութիւն մ'ըրնու հետև Արտաքին գործոց նախարար Բիֆաթ փաշա: Դատական նախարարին հետ տեսակցութեան միջոցին, որտեղ ներկայ կը գտնուէր նախկին կրօնից անտուշ Պէշա պէյ, Նեճմետին պէյ չայտարարեց թէ կտառաւորութիւնը Հայոց Պատրիարքարանին հետ անջնջմբ ինկիւրներ չունի, և եղած գործերն ալ օրէնքի սահմանին մէջ կը կարգադրուին: Տեղապար Ս. Բ. արատախանեց թէ ամէնուն փառքն ալ օրէնքի գործադրութիւնն է: Օրհամար, օրէնքը չի նկատուիր որ մեր սեպուկան տունէն և հողէն զրկուած մնանք: Պատերազմական նախարար Մանուտ Շէլքէթ փաշա, իր տեսակցութեան միջոցին գովեց Հայ զինուորներու ընդունակութիւնը և ազմական կեանքին մէջ: Իսկ ելմանական նախարար Ճալիլ պէյ խոստացաւ ձեռքէն եկեղծին չափ աշխատիլ գահայեցեալ համար Տեղապար, և յայտարարեց թէ հոգային խնդրոց վերաբերեալ օրինակի մը ուղարկէ: Կարգադրու և լաւ մը ուսումնասիրելու համար, աւելի վերջ վերջ միջոցով և արդարեւ Տեղապար Ս. Բ. թէ իր խնդիրները մասնաւոր ու չափաւոր խոստովանեց: «Այստեղ ձերն է, բայց սա, երբ որ ուղեք ելիք»:

Տեղապար Ս. Հ. արատախանի իրենց թէ և վարձ խոսակցութիւնը լաւ սուրբութիւն թողուցած են բոլոր նախարարներուն վրայ, որոնք ջերմապէս շնորհաւորեցին զինքը՝ ստանձնած պաշտօնին համար: Եւ Սրբաշեանի վրայ Գ. Բ. օր և ան աջակցեց Էֆ. Բա. փաշային նախարարներուն, յետոյ Յերակոյտի նախարար Սաիա փաշայի, զոր իր ապարանքին մէջ չգտնելով, այցելութիւն տուաւ Երեւոյ: Ժողովոյ նախարար Ահմէտ Րիզա պէյի, որ հաւատեց թէ կտառաւորութիւնը ջերմապէս կը գնահատէ Հայոց հայրենասիրութիւնը: Եւ վստահութեամբ փառաքին վրայ, Տ. Վարդապետ Ս. խոստացաւ այցելել Գահողիլի մէջ հիմնուած ձեռնարկած ուղղկանց վարձարանը, որ ամէն հազար կրօնքի ու լեզուն տրվեցին որոշուած ըլլալով, երբ որ ուղարկուի Պատրիարքարանէն ձեռնհաս և չքմամբ եկեղեցական մը պիտի անուանուի՝ իբրեւ կրօնաւար:

ԽԱՌԻՆ ԺԱՂՈՎԸ այս չորեքշաբթի օրուն նիստին ալ չկրցաւ վերջնական որոշում տալ թէ Պոլսոյ գաղաթաղ երեսփոխաններու տեղ կտառաւորելիք նոր ընտրութեան միջոցին ընտրողներէն զոնէ մէկ տարուան 25 զրէ, ազգային տուրք վճարած ըլլալու պայմանը պէտք է պահանջել թէ ոչ: Նախորդ չարքան սոցալիսի որոշում տալու տրամադրութիւն կարողացաւ նիստին մէջ վերադառնալ թեր ուղեւ կարծեանց փոխանակութիւններ եղան, և վերջնական որոշում մը չկրնալով տրուել, հորկ տեսնուեցաւ նոր խորհրդակցութեան մը: Ընդհանուր կարծիքն է թէ

ԽԱՌԻՆ ԺԱՂՈՎԸ այս չորեքշաբթի օրուն նիստին ալ չկրցաւ վերջնական որոշում տալ թէ Պոլսոյ գաղաթաղ երեսփոխաններու տեղ կտառաւորելիք նոր ընտրութեան միջոցին ընտրողներէն զոնէ մէկ տարուան 25 զրէ, ազգային տուրք վճարած ըլլալու պայմանը պէտք է պահանջել թէ ոչ: Նախորդ չարքան սոցալիսի որոշում տալու տրամադրութիւն կարողացաւ նիստին մէջ վերադառնալ թեր ուղեւ կարծեանց փոխանակութիւններ եղան, և վերջնական որոշում մը չկրնալով տրուել, հորկ տեսնուեցաւ նոր խորհրդակցութեան մը: Ընդհանուր կարծիքն է թէ

այս անգամն համար պէտք է անցա-
ղաղ օրոշում մը տալ այս կամ այն ձևով,
և ևս ինքզին հիմնական լուծում մը տա-
լու դարձը թողուլ Ազգային Ժողովին:

ԵԿԵՂԵՑ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎԸ.
յառաջիկայ էջ. 24 Փետր. Ժ. Ազգ. Պատրի-
արքանը նիստի հրաւիրումն է՝ «վերջերս
պատահած եկեղեց. կարեւոր խնդիր մը
լուծելու համար պիտանաւոր խորհրդակ-
ցութեամբ»:

ՏԻՐՈՒՆԻ— Մերոշնադարդ Տ. Մե-
րուզ Արքեպ. Սմբատեան, ծանօթ իր բա-
նասիրական աշխատութիւններով, որ վեր-
ջերս էջմիածնէն ախտի դացած էր Երու-
սողէմ, նոյն քաղաքին մէջ վախճանած է:

* * * Գարթալի Տ. Մուշեղ քհ. Նաւա-
վարեան երկարատեւ հիւանդութիւնէ մը
կտրք ի տէր հանգեաւ չարթուս: Յուզար-
կաւորութիւնը կատարուած է հանդիտա-
ւորակէս:

ԳՍԻԱՌՆԵՐՈՒ ԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ.—
Բողաք. Ժողովոյ որոշմամբ Տքդ. Տաղա-
ւարեան էֆ. եւ գործակատար Գամէր էֆ.
այսօր դիմում կ'ընեն Ներքին Գործոց նա-
խարարին մօտ, որպէս անօրէնութիւն մը
ըլլալու համար Պօղոսյանեան գաւառի Բում-
տիկին գիւղին մօտին, ուրկէ Հոյերը իմաց
տուած են թէ իրենց կեանքը վտանգի
մէջ է Ասէմ չափուշ անուն չարագործի մը
երեսէն, որու գէմ եղած լողօքները նկու-
տի չեն տանուած տեղային կառավարու-
թեանէն:

ՄԻՍՏԵԱՆ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ. տարե-
կան մեծ պարանոցէսին հասցիին եղած է
ուելի քան 2000 տկի:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ածնի օրը հանգիստաւոր
արտօղութիւններ եղան ըստը Հայ Եկե-
ղեցիներու մէջ, եւ դպրոցական սուր-
ւորէ հանդէսներ ալ տեղի ունեցան:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ.— Բիւրայի Պատմ.
դատարանը մէկուկէս ամիս բանտարկու-
թեան եւ դատական ծախսոց վճարման
դատապարտեց այն Գում Գաբուցի խոհ-
արը, որ երկու ամիսի չափ առաջ մարտ-
կով հարուածած էր Բիւզանդիոնի անօրէն-
խմբադրակա Քէչիկոն էֆ. Ե: Նոյն թերթը
իրաւումը կ'ըսէ թէ «Այս վճիռը կը նշանու-
կէ թէ սօբան պաշասխան չէ Դրիլին»:

“ՏԱՃԱՐ”Ի ՇՈՒՐՁԸ

Տանարի ընթերցողներուն մասնաւոր
ուշադրութեան կը յանձնուի այն թիւին
մէջ իսկ Պրուսայի արժանընտիր առաջնորդ
եւ նախորդ Պատր. Տեղապահ Գեր. Տ.
Յովհաննէս Արքեպ. տրչարունիի հետադիւ
յօդուածը՝ Մարդկային հոգիի անմահու-
թեան վրայ, որ ճշմարտաինդիր միտքե-
րու համար օրուան հարց մըն է միշտ, դե-
րազանցօրէն շահադրժական:

Իսկ յառաջիկայ թուով Անկիւրիոյ Ա-
ռաջնորդ Գեր. Տ. Բաղդէն Եպիսկոպոս կը
սկսի յօդուածներու կարեւոր շարք մը՝

ՄԵՍ ՊԱՆՈՑ ԱՌԹԻԻ ԿՐՈՆ. ԽՈՐՀՐԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւ Սրբաշնութեան անուան բաւական է
համոզում դոյացնելու թէ ս'ըքան այժմէ-
տեան սգիով մը պիտի դիմնայ կրօնքէն եւ
անոր ներշնչով, յաւանեական ճշմարտու-
թիւններէն հեռանալու ձգտող Ժողովուրդը՝
մասնաւորապէս երկասարգութիւնը՝ մօ-
տեցնել Աւետարանի վերաբար սկզբունք-
ներուն:

Առաջին յօդուածն որ յառաջիկայ թիւին
մէջ (փետր. 26) պիտի երեւայ, խորագիր
ունի՝ ԵՐԶԱՆԻԿ ԿԵԱՆՔԸ:

Վ Ր Ի Պ Ա Կ

Բաղդէն Եղոր. Մաքսութեան խորհրդանշանը,
յօդուածին մէջ (ՏԱՃԱՐ թիւ 4) ապագիտական
քանի մը սխալներ սպրկած են, զորս կ'ուզենք
ԵՐԵՍ ՍԻՆԱԿ ՏՈՂ. ՏՊՈՒԱՐ Է ՊԷՏ. Է ԸՆԱՅ

54.	Ա.	1(վարէն) շատ շատ շատ շատ
54.	Բ.	4(վարէն) 1899 թ 1900 թ
55.	Ա.	16(վարէն) բոլորապէս խորտակուած
55.	Բ.	2(վարէն) ճերմակութեամբ ճերմա- կութեամբ
55.	Բ.	20(վարէն) մարմինները մատչելիները

ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՀԱՄԱՅՆԱԿ ԲԱՆՑ. ԷԲՍԵՐԱԿԱՆ.

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ՀԱՐՄԱՐՈՐ ԲԱՆՑ. ԿԷԶԻՐԵԱՆ.

ՏՊԱՐՍՆ “ՇԱՆԻ”

Դաշաթիւ, ձորի Դաշաթիւ, թիւ 9

“ՏԱՃԱՐ,,Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց' տարեկան 40 հոգեւոր
Արքեպիսկոպոսի համար 40 ֆրանկ
Ռուսիա 4 ռուբլի
Ամերիկա 2 ֆար
Չեռեկէ կը ծախուի պրակը 40 փարա


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՆԵՐԸ ԿԱՆԽԻՆ ԵՆ

ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻՐԱՄՍՏԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է գլխիկ առ
Զարմայր Քահանայ Կեղիւհեան, Կ. Պոլիս, Պեթիքաւ, Հայոց Եկեղեցի

در سعادته بشکلا شده ارمی کلیسا سنده (داجار) غرضی مدیری پاپس زاوماير

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.



ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ .— Կաղանց Ան-
բալբի Վ. Ասմունկեան .— Իր մէջ կ'ամ-
փափէ աշխարհի նշանաւոր անձնաւորու-
թեանց, Ֆրանսիայի, Ռուսիայի, Կարֆիլի
եւ այլաց կեանքի ծրարները եւ աւել
կարեւոր նիւթեր: Հայ պատմիչներուն եւ
երկրաւորներուն, նաեւ դարձի աէր մար-
դաց համար անհրաժեշտ եւ պիտանի հրա-
տարակութիւն մը: Գին 2 զրշ: Կեղրու-
նասեղի Զարգարեան-դրատուն, Չապազ-
նիկար:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ .— Բազուի Արմ.
Տ. Ներսէս քն. Տ. Կարապետեանի՝ անց-
եալ տարի Մեծ Պահոց Ե. կիրակին Ս.
Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ մէջ խօսած
հազեշտ եւ հմտակց քարոյր: Տպ. Ս. Թ.
Շահապետեանի, Բազու, Գին 15 կապէկ:

ԱՐՑԻ ԺԱՄԵՐ .— Ողբացեալ բանաս-
տեղծ Կարապետ Ոսկեանի զանազան
թերթերու մէջ ցիրաւան կարտած քեր-
թաւանները, նաեւ անոնց քերթաւանները,
բոլորն ալ յաւելի իրենց պարզութեամբ
մէջ, զեղեցիկ հասարակ մէջ ամբարտաւ
են իր հարադասին՝ Ազն. Գրիգոր էֆ. Ոսկեա-
նի կողմէ: Գիրքին տառքին էջերը կը դար-

դարէ Սիպիլի զեղեցիկ մէկ յառաջարանը:
Տպ. Օ. Արզուման, Գին 8 զրշ:

ԿԵԱՆՔԻ ԻՆՉՊԷՍ ՈՐ Է .— Սրամիա
զրոյ Գր. Զոհրապ էֆ. Ի նորակէսներու
երկրորդ շարքը՝ հարստի մը մէջ ամբար-
տած: Տպ. Օ. Արզուման, Գին 7¹/₂ զրշ:

ԱՐԵՒԵԼԵԱՆ, ԳԷՄԻՔԵՐ, Պոտսիս
(Ա. Պրակ) .— Գրեց Սահակ-Մկրտապ .—
Գին 1 զրշ:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

ՀԻՒԱՆԻՆԻՅԷԹ, Հայաստան եւ թրքա-
տարաւ ամառներէ՝ քաղաքական, աղ-
ղային, գիտական եւ սոսկաւորական: Ար-
ածնաւէր—Տնորէն՝ Յակոբ Էֆ. Զ. Վար-
ժապետեան: Կարեւոր պահան մը լեցնելու
կոչուած է մամուլարարական թրքախոս աղ-
ղայնաց մէջ: Տարեկան բաժնեդէն 12 զրշ:
Արտատանան 3 Ֆր.:

ՈՒՍԱՆՈՎ .— Մանկավարժական, գրա-
կան, գիտական եւ բանասիրական ամսա-
թերթ: Հրատարակուելու Գ. թիւը՝ ճոխ
բաժանաւորութեամբ:

